ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» հուլիսի 2026 թվականի N: 283 - Ա ք.Գյումրի

ՎԱՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի չափերի հաշվարկման և հատուցման վճարման կարգի» 3-րդ և 7-րդ կետերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կանոնադրության» 20-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Վանիկ Մարտիրոսյանի 2026 թվականի հուլիսի 13-ին զեկուցագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Վանիկ Մարտիրոսյանին 2026 թվականի հուլիսի 14-ին գործուղել քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայության Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մարալիկի թիվ 2 միջնակարգ դպրոց» և «Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների հավակնորդների զարգացման ծրագրերի փորձաքննության ներկայացման և ընտրության համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N:1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2026 թվականի հուլիսի 14-ին:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է